Արձանագրություն N 2

ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54 ծածկագրով Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **23.11.2017թ.**

ժ. 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	Ա.Սողոմոնյան
Հանձնաժողովի անդամներ՝	Կ. Սիմոնյան
	Գ. Մոմջյան
	Ա. Ավալյան
	Ա. Ավետիսյան
Հանձնաժողովի բացակա անդամ՝	Գ. Մոմջյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Կարապետյան

1. Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա.Սողոմոնյան)

Ընդունել ի գիտություն, որ.

1.1 «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացումը կատարվել է «armeps.am» համակարգի միջոցով՝ սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 12:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք, ՀՀ մշակույթի նախարարություն, 6-րդ հարկ հասցեում: Համակարգի միջոցով հայտ էին ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1	«Բուրգ-999» ՍՊԸ	էլեկտրոնային փոստ՝ burg_999@yahoo.com
2	«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ	էլեկտրոնային փոստ՝ gevorgyan.nersisyan@mail.ru
3	«ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ	էլեկտրոնային փոստ՝ lilanarm@mail.ru
4	«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ	էլեկտրոնային փոստ՝ stepanyan_andranik@rambler.ru
5	«Դ.Ե.Խ.Ս.» ՍՊԸ	էլեկտրոնային փոստ՝ dekhs1@mail.ru
6	«Վահրադյան Շին» ՍՊԸ	էլեկտրոնային փոստ՝ vahradyanshin@yandex.ru
7	«Պապ և Դավիթ» ՍՊԸ	էլեկտրոնային փոստ՝ hermineA85@mail.ru
8	«Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ	էլեկտրոնային փոստ՝ qristine.hovsepyan@yandex.ru
9	«Այպոշին» ՍՊԸ	էլեկտրոնային փոստ՝ aiposhin@mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.2 Մասնակիցներ՝ «Գևորգյան և Ներսիսյան», «Բուրգ-999», «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ», «Վահրադյան Շին», «Պապ և Դավիթ» և «Այպոշին» ՍՊԸ-ների <<armeps.am>> էլեկտրոնային համակարգ մուտքագրած հայտերում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.3 Մասնակիցներ «Վանյան և Հովսեփյան» «ԼԻԼԱՆԱՐՄ», և «Դ.Ե.Խ.Ս.» ՍՊԸ-ների «armeps.am» էլեկտրոնային համակարգ մուտքագրած հայտերում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են, սակայն կազմված չեն հրավերով սահմանված պայմաններին համապատասխան: Մասնավորապես՝ «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման (9-րդ հավելված) մեջ բացակայում են ընկերության տնօրենի անձնագրային տվյալները, «Դ.Ե.Խ.Ս.» ՍՊԸ-ի հայտի ապահովմանը կից վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվը լրացված է և «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի հայտի ապահովմանը կից վճարման պահանջագրի 7-րդ կետի «ՀԾՀ» տողը լրացված է, մինչդեռ «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ն չի հանդիսանում ֆիզիկական անձ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.4 Մասնակիցներ «Բուրգ-999», «Գևորգյան և Ներսիսյան», «ԼԻԼԱՆԱՐՄ», «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ», «Դ.Ե.Խ.Ս.», «Վահրադյան Շին», «Պապ և Դավիթ», «Վանյան և Հովսեփյան» և «Այպոշին» ՍՊԸ-ների որակավորման չափանիշների վերաբերյալ հայտարարության պահանջները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.5 Մասնակիցներ «Բուրգ-999», «Գևորգյան և Ներսիսյան», «ԼԻԼԱՆԱՐՄ», «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ», «Դ.Ե.Խ.Ս.», «Վահրադյան Շին», «Պապ և Դավիթ», «Վանյան և Հովսեփյան» և «Այպոշին» ՍՊԸ-ների գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.6 Մասնակիցներ «Բուրգ-999», «Գևորգյան և Ներսիսյան», «ԼԻԼԱՆԱՐՄ», «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ», «Դ.Ե.Խ.Ս.», «Վահրադյան Շին», «Պապ և Դավիթ», «Վանյան և Հովսեփյան» և «Այպոշին» ՍՊԸ-ների կողմից ներկայացրած գնային առաջարկները հետևյալն են՝

Հ/Հ	Գնման Առարկան	Նախահաշվային Գինը	Մասնակցի անվանումը	Մասնակցի Առաջարկված գինը ՀՀ դրամով	
				Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ն ներառյալ
1	ՀՀ Արագածոտնի մարզի Ամբերդ ամրոցի ենթակառուցվածքների զարգացման և տարածքի բարեկարգման աշխատանքներ	37415000	«Վահրադյան Շին» ՍՊԸ	25815000	30978000
			«Դ.Ե.Խ.Ս.» ՍՊԸ	36800000	36800000
			«ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ	25700000	30840000
			«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ	24000000	28800000
			«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ	31125000	37350000
2	ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ե/գ կայարան Քոբայրավանքի գլխավոր եկեղեցուն կից մատուռի տանիքաձածկի նորոգման աշխատանքներ	7942580	«Վահրադյան Շին» ՍՊԸ	5999000	7198800
			«Բուրգ-999» ՍՊԸ	6417500	7701000
			«Այպոշին» ՍՊԸ	6500000	7800000
3	ՀՀ Լոռու մարզի Լոռի բերդ համայնքի Լոռի բերդ ամրոցի գլխավոր մուտքին հարակից պարսպապատերի մասնակի վերականգնման, ենթակառուցվածքների զարգացման և տարածքի բարեկարգման աշխատանքներ	24200000	«Վահրադյան Շին» ՍՊԸ	16689000	20026800
			«Պապ և Դավիթ» ՍՊԸ	14583300	17499960
			«Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ	12800000	12800000
			«Այպոշին» ՍՊԸ	19083333	22900000
			«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ	20000000	24000000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1.7 Սույն արձանագրության 1.3 կետում նշված անհամապատասխանությունների ճիշտ գնահատման նպատակով դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը և նիստը ամփոփել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզաբանումը ստանալուց անմիջապես հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

* * *

Ընդունել ի գիտություն, որ.

1.8 ՀՀ ֆինանսների նախարարությունից 30.11.2017թ.-ին /ի պատասխան ՀՀ մշակույթի նախարարության 24.11.2017թ. թիվ 02/01.91/7169-17 գրության/ ստացվել է պարզաբանում սույն արձանագրության 1.3 կետում նշված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Հանձնաժողովը որոշեց.

1.9 Մասնակիցներ՝ «Բուրգ-999», «Գևորգյան և Ներսիսյան», «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ», «Վահրադյան Շին», «Պապ և Դավիթ», և «Այպոշին» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.10 Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված հայտերի գնահատման վերաբերյալ պարզաբանումը մասնակիցներ՝ «Վանյան և Հովսեփյան» և «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ների հայտերը գնահատել բավարար, իսկ «Դ.Ե.Խ.Ս.» ՍՊԸ-ի հայտը՝ անբավարար հրավերի սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.11 Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.12 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված և ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.13 Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Վահրադյան Շին» ՍՊԸ–ին, որպես բավարար գնահատված և ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.14 Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ–ին, որպես բավարար գնահատված և ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.15 Ընթացակարգի 4-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած տվյալ չափաբաժնով հայտ չլինելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.16 Հիմք ընդունելով "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը հանձնաժողովը որոշեց՝ էլեկտրոնային փոստի միջոցով

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Սողոմոնյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54» ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան ՀՀ ֆինանսների նախարարություն կողմից եզրակացության տրամադրման և առաջին տեղը զբաղեցնող մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը ժամը՝ 11:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք, ՀՀ մշակույթի նախարարություն, 6-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Սողոմոնյան
Անդամներ՝		Կ. Սիմոնյան
		Ա. Ավալյան
		Ա. Ավետիսյան
Քարտուղար՝		Ն. Կարապետյան

30.11.2017թ.
Ժամը՝ 11.00

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

Ք.Երևան **23.11.2017թ.**

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սողոմոնյանս, անդամ՝ Կ. Սիմոնյանս, Ա. Ավալյանս, Ա. Ավետիսյանս և քարտուղար Ն. Կարապետյանս նշված ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Սողոմոնյան
Անդամներ՝		Կ. Սիմոնյան
		Ա. Ավալյան
		Ա. Ավետիսյան
Քարտուղար՝		Ն. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

N 02/01.91/2169-17 "24" 11 2017 թ.

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
պրն Կ. ԹԱՄԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թամազյան

Հայտնում ենք, որ ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 16.11.2017 թ. հայտարարված «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 23.11.2017թ. կայացած հայտերի բացման նիստում ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման ընթացքում պարզվել է, որ ընթացակարգի մասնակիցներ՝ «Վանյան և Հովսեփյան», «Դ.Ե.Խ.Ս.» և «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ների հայտերում առկա են անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջներին:

Մասնավորապես՝

1. «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման (9-րդ հավելված) մեջ բացակայում են ընկերության տնօրենի անձնագրային տվյալները,

2. «Դ.Ե.Խ.Ս.» ՍՊԸ-ի հայտի ապահովմանը կից վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվը լրացված է,

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, հեռ./Тел./Tel. (010, 011) 52 93 49, ֆաքս/факс fax (374 11) 52 39 22.
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
էլ-փոստ/Эл.почта/E-mail. info@mincult.am, www.mincult.am

3. «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի հայտի ապահովմանը կից վճարման պահանջագրի 7-րդ կետի «ՀՇՀ» տողը լրացված է, մինչդեռ «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ն չի հանդիսանում ֆիզիկական անձ:

Խնդրում ենք Ձեր աջակցությունը նշյալ մասնակիցների հայտերը գնահատելու հարցում:

Առդիր՝ 6 թերթ:

Հարգանքով՝ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Ն. Կարապետյան
Հեռ՝ 011-58-51-78

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Tel. (010 011) 52 93 89 Ֆաքս fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail. info@mincult.am, www.mincult.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 . Ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Ի պատասխան 24/11/2017թ.
թիվ 02/01.91/7169-17 գրության

Հարգելի պարոն Մուրադյան

Ուսումնասիրելով Ձեր վերոնշյալ գրությունը (այսուհետ՝ Գրություն)՝ հայտնում ենք հետևյալը.

Գրության 1-ին կետով բարձրացված հարցի վերաբերյալ.

ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

Միաժամանակ, «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված է, որ նույնականացման քարտը կամ դրանում ամրագրված տվյալները կարող են օգտագործվել որպես վավերական փաստաթուղթ և տվյալներ այնպիսի իրավահարաբերություններում, որոնց կարգավորմանն ուղղված իրավական ակտերով նախատեսվում է անձնագրի կամ անձնագրային տվյալների կամ սոցիալական ապահովության քարտի օգտագործումը:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ մասնակիցը բովանդակային առումով կատարել է տուժանքի մասին համաձայնություն ներկայացնելու պահանջները, գտնում ենք,

որ նման իրավիճակում ձևական սխալների պատճառով հայտի անբավարար գնահատման համար հիմքեր առկա չեն.

Գրության 2-րդ կետով բարձրացված հարցի վերաբերյալ.

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Գրության մեջ նշված ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված է, որ վճարման պահանջագրի ամսաթիվը պետք է լրացվի շահառուի (պատվիրատուի) կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ ներկայացված վճարման պահանջագրում վերջինիս ամսաթիվը լրացվել է վճարողի (մասնակցի) կողմից, ինչը չի համապատասխանում նշված պահանջներին, գտնում ենք, որ հիշյալ մասնակցի հայտը ենթակա է մերժման.

Գրության 3-րդ կետով բարձրացված հարցի վերաբերյալ.

Գրության համաձայն՝ ֆիզիկական անձ չհանդիսացող մասնակցի կողմից լրացվել է վճարման պահանջագրի «Վճարողի ՀՎՀՀ» դաշտը:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ նշվածը դիտարկվում է որպես մասնակցի կողմից լրացուցիչ տեղեկատվության ներկայացում, ինչը չի կարող հիմք հանդիսանալ մասնակցի հայտը անբավարար գնահատելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Կ. ԹԱՄԱՉՅԱՆ

Կատ. Հանրային ֆինանսների կառավարման
մեթոդաբանության վարչություն
հեռ. 011 600 258